ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

03.05.2016 14:42

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում կազմակերպվել էր վերապատրաստման դասընթաց «Ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության ճանաչման առանձնահատկությունները» թեմայով: Դասընթացը վարել է փաստաբան Սամվել Սիմոնյանը:
Փաստաբանները քննարկել են առկա իրավական դաշտում Ձեռքբերման վաղեմության ինստիտուտի անցյալ, ներկա և հետագա հավանական զարգացումները, ինչպես նաև՝ իրավահարաբերության մասնակիցների ակնկալիքներն ու դատարանների դիրքորոշումները:
Մասնակիցները հիմնականում մտքեր են փոխանակել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի զարգացման դինամիկայի, դատարանների կողմից այդ հոդվածին ուղղված նոր իրավամեկնաբանության տենդենցի և դրա վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի հավանական՝ որոշումների տեսքով արձագանքների, ինչպես նաև՝ պրակտիկ խնդիրների շուրջ:
Սեմինարի ընթացքում մեկնաբանվել են նյութաիրավական նորմը և դրան առնչվող ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })